ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

25.12.2018թ. N 02/16.4/6405-18

<<Երևանի տնաշինական կոմբինատ>> փակ
բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն՝
պարոն Սամվել ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ պատվիրատու) և <<Երևանի տնաշինական կոմբինատ>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ կապալառու) միջև 2017 թվականի հուլիսի 24-ին կնքվել է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Հիմք ընդունելով պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և պայմանագրի 3.1.4 կետի ա) և բ) ենթակետերը՝ պատվիրատուն 2018 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծում է պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կտեղադրվի gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727